



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N\_64**

Տուգանք նշանակելու մասին

10.03.2021թ.

ք. Երևան

Քննելով տեսչական մարմնի կողմից 2021թ. հունվարի 26-ի N\_53-Ա հրամանով «ՌՈՈՒԴՎԵՅ» ՍՊԸ-ում կատարված  
Տնտեսվարող սուբյեկտի անվանումը

ստուգման նյութերը (ստուգման ակտ N\_53Ա կազմված 03.03.2021թ., խախտումների մասին 09.02.2021թ. արձանագրությունը և այլ նյութերը), որոնցով բացահայտվել է որ՝

ՍՊԸ-ն զբաղվում է հեղուկ գազի մանրաձախ վաճառքով: Ստուգման արդյունքում պարզվեց, որ օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցը՝ վառելիքի լիցքավորման բաշխիչ աշտարակը 2 ճկափողերով, ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանում ստուգաչափված չէր:

Արձանագրված խախտման համար 03.03.2021թ. տրվել է չափման միջոցների շահագործման արգելման մասին թիվ 6 կարգադրագիր:

Փաստացի խախտվել է «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Կատարված իրավախախտման հանգամանքները և խախտման էությունը

Նշված իրավախախտման համար պատասխանատու է՝

ՍՊԸ-ի տնօրեն Վահե Կամոյի Նովչատյանը

իրավախախտողի անունը, ազգանունը, պաշտոնը

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 244 պրիմ 7 հոդվածով.

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1.Տվյալ իրավախախտման համար պատասխանատու ճանաչել Վահե Նովչատյանին և կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 158 հոդվածի 23-րդ մասով նախատեսված պատասխանատվության միջոցը, սահմանել տուգանք՝ 100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

2.Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 305 հոդվածի՝ տուգանքը պետք է վճարվի **Պետական բյուջե 900005024014 հ/հ** տուգանք նշանակելու մասին որոշումը իրավախախտողին հանձնելու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում:

3.Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ բաժնի դրույթներին համապատասխան:

4.Տուգանքը սահմանված ժամկետում վճարելուց հետո բանկային կտրոնի պատճենը անհրաժեշտ է 3 օրվա ընթացքում ներկայացնել տեսչական մարմնին՝ ք. Երևան, Կոմիտասի 49/2 հասցեով:

5.Սույն որոշումը կարող է բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում Վարչական դատարան:

Տեսչական մարմնի ղեկավար՝



Արմեն Կոտոյան